

## ՎԵՐՋԱԲԱՆ

Փաստորեն 1928 թվականին ժողովրդահանրապետական կուսակցության համագումարին հնչած Քեմալի հայտնի ճառը իր ուրույն տեղն է գտել թուրքական պաշտոնական պատմագրության մեջ և կրկնվում է մինչ օրս: Սակայն Քեմալի ելույթը չի պատասխանում այն հարցերին, որոնք պահանջում են օբյեկտիվ պատմական ուսումնասիրությունները: Կարելի է ենթադրել, որ մինչ այդ Թուրքիայում ազգային շարժում գոյություն չի ունեցել: Բնականաբար պատմաբանը (գիտնականը) չի կարող այդ ելույթով պայմանավորել Թուրքիայի ողջ նորագույն պատմությունը: Բացի այդ պաշտոնական հրատարակություն հանդիսացող “Tarih” (պատմություն) աշխատությունը, որը վերաբերում է Թուրքիայի նորագույն պատմությանը, չորրորդ հատորի մեջ ոչ միայն ամբողջությամբ հետևում է Քեմալի հայեցակարգին, այլև սահմանափակվում է բացառապես այն տվյալներով, որոնք նշվել են այդ ելույթում<sup>72</sup>:

Աթաթուրքի ճառը ժամանակի ընթացքում խոր արմատներ է գցում թուրքական պատմագրության մեջ և ընկալվում որպես թուրքական պաշտոնական

<sup>72</sup> Миллер А. Ф., *Очерки новейшей истории Турции*, Издательство Академия Наук СССР, Москва 1948, Ленинград, ст. 8, ст. 280,

պատմագրության հիմնական ուղղություն: Ամբողջ թուրքական պատմագրության մեջ պահպանվել են այդ ճառի դրույթները և դրանք որպես թուրքական պատմական նոր հայեցակարգ ներկայացվել են ինչպես թուրքական պատմագիտական ընկերության, այնպես էլ ամբողջ թուրքական պատմագիտական աշխատություններում և հրապարակումներում:

Փաստորեն թուրք պատմաբանները փորձում են հասարակությանը ներկայացնել թուրքական պատմագրության և ընդհանրապես թուրքիայի պատմության թուրքական տարբերակը: Նրանք ոչ միայն ժխտում են հայերի գոյությունը Արևմտյան Հայաստանում, այլ նաև փորձում են ամեն կերպ ցույց տալ, որ այդ տարածաշրջանում ամենահին ժամանակներից ապրել են թուրքական ցեղեր:

Չնայած նրան, որ հետագայում բավականաչափ նվազել է թուրքական պատմագիտական ընկերության դերը պատմագրության ուսումնասիրման ոլորտում, այնուամենայնիվ մինչ օրս թուրք պատմաբանների առանձին աշխատություններում դեռևս մնում է քեմալիզմի ժամանակաշրջանի ազդեցությունը: Այս իրողությունը ցույց է տալիս քեմալական պատմության «նվաճումը», որին ժամանակի ընթացքում ձգտել են հասնել թուրքիայի Հանրապետության իշխանությունները: